Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի

Վանաձորի գրասենյակ

Հոգեկան առողջության ոլորտում մարդու իրավունքների վիճակը՝ ըստ պետական մարմինների կայքէջերով և զանգվածային լրատվության միջոցներով 2014 թ. տարածված նյութերի

2015 թ.

Վանաձոր

Խմբագիր՝

Արթուր Սաքունց

Կազմող՝

Մարիետա Թեմուրյան

Բաց Հասարակության
Հիմնադրամներ - Հայաստան

Սույն ուսումնասիրության մեջ տեղ գտած տեսակետների հեղինակը ՀՔԱ Վանաձորի գրասենյակն է, որն էլ միայն պատասխանատու է նյութի բովանդակության համար: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Բաց Հասարակության Հիմնադրամների կողմից, հետևաբար չեն ներկայացնում Բաց Հասարակության Հիմնադրամների դիրքորոշումներն ու տեսակետները: Սույն ուսումնասիրության բովանդակությունը կարող է չհամընկնել Բաց Հասարակության Հիմնադրամների տեսակետներին: Ուսումնասիրության իրականացումը հնարավոր է դարձել Բաց Հասարակության Հիմնադրամների ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ «ՀՔԱՎ-ի կայունությունը ՀՀ -ում ժողովրդավարության և մարդու իրավունքների մարտահրավերների լույսի ներքո» ծրագրի շրջանակներում, դրամաշնորհ՝ 18821:

Բովանդակություն

Նախաբան 4

Մեթոդաբանությունը 4

Հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հրապարակումների աղբյուրները 5

Հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հրապարակումների բնույթը, հանրային կարծիքի ձևավորման վրա ունեցած նրանց ազդեցությունը 7

Հրապարակումների բնույթը 7

Հանրային կարծիքի ձևավորման վրա ունեցած ազդեցությունը 8

Հրապարակված նյութերը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների խախտման տեսանկյունից 11

Ամփոփում 12

Նախաբան

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը 2011 թվականից իրականացնում է զանգվածային լրատվության միջոցներով և պետական պարմինների ինտերնետային էջերով հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ տարածված նյութերի մշտադիտարկում՝ նպատակ ունենալով բացահայտել պետական քաղաքականության բնույթը, ինչպես նաև հասարակության վերաբերմունքը հոգեկան առողջության բնագավառի խնդիրների, այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների նկատմամբ:

2014 թ. մասնավորապես ուսումնասիրվել է 443 նյութ, որոնք հրապարակվել են ինտերնետային 16 էջերով՝ moh.am, mlsa.am, police.am, genproc.am, news.am, a1plus.am, lragir.am, 168.am, 7or.am, slaq.am, ilur.am, galatv.am, armlur.am, 1in.am, operativ.am, hhpress.am:

Մեթոդաբանությունը

Ուսումնասիրության ընթացքում հավաքագրված նյութերը դասակարգվել են ըստ նրանց տարածման աղբյուրների, տեսակի, ինչպես նաև հանրային կարծիքի ձևավորման վրա ունեցած ազդեցության:

Ըստ տարածման աղբյուրների՝ նյութերը դասակարգվել են երկու խմբի՝

- պետական,
- ոչ պետական:

Պետական և ոչ պետական աղբյուրներից ստացված տեղեկատվությունը իր հերթին խմբավորվել է ըստ կոնկրետ մարմինների, կազմակերպությունների և մարդկանց խմբերի:

Առանձնացվել են հրապարակումների հետևյալ երեք տեսակները՝

- հետաքննական,
- տեղեկատվական,
- դիրքորոշում արտահայտող:

Ըստ հանրային կարծիքի ձևավորման վրա ունեցած ազդեցության՝ նյութերը բաժանվել են երեք խմբի՝

- նյութեր, որոնք հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ ձևավորում են բացասական վերաբերմունք,
- նյութեր, որոնք հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ ձևավորում են դրական վերաբերմունք,
- նյութեր, որոնք ունեն չեզոք բնույթ:

Ուսումնասիրության արդյունքում առանձնացվել են նաև այն հրապարակումները, որոնք անդրադառնում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների խախտումներին:

Հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հրապարակումների աղբյուրները

Մշտադիտարկման ընթացքում հավաքագրված 443 հրապարակումներից 28-ը տարածվել են պետական մարմինների ինտերնետային էջերով, 415-ը՝ ոչ պետական:

Պետական մարմինների ինտերնետային էջերով 2014 թ. տարածված 28 նյութերից մեծամասնությունը՝ 17-ը, տարածվել է ՀՀ առողջապահության նախարարության, 8 նյութ՝ ՀՀ ոստիկանության, 2 նյութ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և 1 նյութ՝ ՀՀ գլխավոր դատախազության ինտերնետային էջերով (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1: 2014 և 2011-2013 թթ. պետական մարմինների ինտերնետային էջերով տարածված հրապարակումների դասակարգումը

N	Պետական մարմին	2014 թ.	2013 թ.	2012 թ.	2011 թ.	Ընդամենը
1	Առողջապահության նախարարություն	17	4	1	5	**27**
2	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2	-[1]	-	-	**2**
3	Ոստիկանություն	8	0	0	8	**16**
4	Դատախազություն	1	0	2	0	**3**
Ընդամենը		**28**	**4**	**3**	**13**	**48**

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, 2014 թ. պետական մարմինների ինտերնետային էջերով հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ ավելի շատ նյութեր են հրապարակվել, քան 2011-2013 թթ.: Եթե առողջապահության նախարարության ինտերնետային էջով 2011-2013 թթ. հրապարակվել է 10 նյութ, ապա միայն 2014 թ. ընթացքում՝ 17: Նշված 17 հրապարակումները վերաբերում են բնագավառում առկա խնդիրներին և դրանց լուծմանը (11 նյութ), ինչպես նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կոնկրետ անձանց (5 նյութ):

Միևնույն ժամանակ աճել է նաև ՀՀ ոստիկանության ինտերնետային էջով հրապարակումների թիվը, հրապարակումներ, որոնք վերաբերում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից հանցագործություններին (5 նյութ), պատահարի, որից

[1] ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքէջը մինչ 2014 թ. չի դիտարկվել, սակայն երբ 2013 թ. մայիսի 2-ին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվեց Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգը, իսկ 2013 թ. սեպտեմբերի 13-ին՝ Հայեցակարգի իրականացման միջոցառումների 2013-2017 թթ. ծրագիրը, որի հիմնական պատասխանատուն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է, առաջացավ նաև այս ինտերնետային էջի դիտարկման անհրաժեշտությունը:

տուժել է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը (1 նյութ) և ՀՊՎ-ներում հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդական խմբի կողմից բարձրացված խնդիրներին (2 նյութ):

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ինտերնետային էջով հրապարակված նյութերը նույնպես վերաբերում են հոգեկան առողջության բնագավառում բարեփոխումներին, ՀՀ դատախազության ինտերնետային էջով տարածված նյութը՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կոնկրետ անձի:

Այն, որ պետական մարմինների ինտերնետային էջերով հրապարակումների գրեթե կեսը վերաբերում են բնագավառում առկա խնդիրներին և որ առկա խնդիրները բարձրաձայնվում են, թույլ է տալիս արձանագրել դրական քայլ հոգեկան առողջության բնագավառում: Չնայած շարունակվում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից հանցագործությունները, այդ թվում՝ սպանությունները, ինչը կարող է հոգեկան առողջության խնդիրների պատշաճ բուժման և կանխարգելման բացակայության հետևանք լինել:

Վերը նշված 28 հրապարակումներից բացի, պետական մարմինների կողմից տրամադրված տեղեկատվությունը տարածվել է նաև ոչ պետական մարմինների ինտերնետային էջերով: Մասնավորապես ոչ պետական մարմինների ինտերնետային էջերով տարածված 415 նյութերից 249-ում տեղեկատվությունը ամբողջությամբ կամ մասամբ տրամադրվել է պետական մարմինների կողմից, և միայն 138 նյութերում են տեղեկատվությունը տրամադրել ոչ պետական աղբյուրները (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2: Ոչ պետական մարմինների ինտերնետային էջերով տարածված հրապարակումների դասակարգումը՝ ըստ պետական և ոչ պետական աղբյուրներից ստացված տեղեկատվության

N	Պետական աղբյուրներ	Թիվը	Տոկոսը
1	ՀՀ առողջապահության նախարարություն	91	39.6
2	ՀՀ պաշտպանության նախարարություն	20	8.7
3	Նյարդահոգեբուժական բուժհաստատություն	6	2.6
4	Ոստիկանություն	27	11.7
5	Դատախազություն	6	2.6
6	Առողջապահական կազմակերպություն	31	13.5
7	ԱԻՆ փրկարարական ծառայություն	2	0.9
8	Քննչական ծառայություն	11	4.8
9	Տեղական ինքնակառավարման մարմին	18	7.8
10	Քննչական կոմիտե	4	1.7
11	Դատական տեղեկատվական համակարգ	2	0.9
12	ՀՀ կառավարություն	1	0.4
13	Այլ	11	4.8
	Ընդամենը	**230**	**100**
	Ոչ պետական աղբյուրներ		
1	Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձ	7	3.5
2	Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի հարազատ	46	22.9
3	Հոգեբույժ	8	4
4	Հոգեբան	4	2
5	Փաստաբան, իրավաբան	8	4
6	Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ	20	9.9

7	Հասարակական կազմակերպություն	19	9.4
8	Զանգվածային լրատվության միջոց և/կամ նշված չի	55	27.4
9	Հայաստանի ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբ	1	0.5
10	Այլ	33	16.4
	Ընդամենը	**201**	**100**
Ընդամենը		**431**[2]	

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, ոչ պետական մարմինների ինտերնետային էջերով տարածված նյութերում առավել շատ տեղեկատվություն տրամադրող է հանդիսացել պետական աղբյուրներից ՀՀ առողջապահության նախարարությունը՝ 236 նյութից 91-ը (մոտ 38 տոկոս), իսկ ոչ պետական աղբյուրներից՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հարազատները՝ 159 նյութից 46-ը (մոտ 29 տոկոս):

Ոչ պետական մարմինների ինտերնետային էջերով ևս ՀՀ առողջապահության նախարարությունը տեղեկատվություն է տրամադրում հիմնականում բնագավառում տիրող իրավիճակի, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կոնկրետ անձանց վերաբերյալ: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հարազատները տեղեկատվություն են տրամադրում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող իրենց հարազատների, նրանց կատարած գործողությունների վերաբերյալ:

Հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հրապարակումների բնույթը, հանրային կարծիքի ձևավորման վրա ունեցած նրանց ազդեցությունը

Հրապարակումների բնույթը

Հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հրապարակումները ինչպես 2011-2013 թթ., այնպես էլ 2014 թ. հիմնականում տեղեկատվական են (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3: Հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ տեղեկատվության դասակարգումը՝ ըստ հրապարակումների տեսակների

N	Տեսակը	2014 թ.		2013 թ.[3]		2012 թ.[4]		2011 թ.[5]		Ընդամենը
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը
1	Դիրքորոշում արտահայտող	28	6	0	0	7	10	5	2	40
2	Հետաքննական	107	24	23	23	17	25	115	46	262
3	Տեղեկատվական	308	70	79	77	45	65	130	52	562
Ընդամենը		**443**	100	**102**	100	**69**	100	**250**[6]	100	**864**

[2] Հրապարակումների թիվը 431 թիվը 415 է, 431 թիվը ստացվել է 16 նյութերում և՛ պետական մարմիններից, և՛ զանգվածային լրատվության միջոցներից տեղեկատվության առկայությամբ:
[3] 2013 թ. դիտարկվել է 13 ինտերնետային էջ հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում:
[4] 2012 թ. դիտարկվել է 20 ինտերնետային էջ մայիս-դեկտեմբեր ժամանակահատվածում:
[5] 2011 թ. դիտարկվել է 26 ինտերնետային էջ փետրվար-նոյեմբեր ժամանակահատվածում:

Սակայն ինչպես տեսնում ենք աղյուսակ 3-ից, ինչպես 2011-2013 թթ., այնպես էլ 2014 թ. մեծ թիվ են կազմում նաև հետաքննական բովանդակությամբ հրապարակումները: Թեև 2011 թ. համեմատությամբ 2012-2014 թթ. հետաքննական բովանդակությամբ նյութերը նվազել են, այնուամենայնիվ վերջիններս կազմում են 2012-2014 թթ. հավաքագրված հրապարակումների մոտ 23-25 տոկոսը: Հարկ է նշել, որ պետական մարմինների ինտերնետային էջերով հրապարակումներից 7-ը եղել են հետաքննական, իսկ 21-ը՝ տեղեկատվական:

Հետաքննական բովանդակությամբ հրապարակումները որպես կանոն պարունակում են տեղեկատվություն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից կատարված քրեորեն հետապնդելի գործողությունների կամ պաշտոնատար անձանց կողմից հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքները խախտող գործողությունների մասին: Հարկ է նշել, որ 2014 թ. հետաքննական բովանդակությամբ հրապարակումներից երկուսում ՀՀ ոստիկանությունը հերքում է ոստիկանության աշխատակիցների կողմից հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների խախտման մասին տեղեկատվությունը:

Հանրային կարծիքի ձևավորման վրա ունեցած ազդեցությունը

Հանրային կարծիքի ձևավորման վրա էական նշանակություն ունի՝ տարածվող նյութը դրական, թե բացասական վերաբերմունք է ձևավորում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ 4: Հրապարակումների դասակարգումը՝ ըստ հոգեկան առողջության բնագավառը ներկայացնելու բնույթի

N	Բնույթը	2014 թ.		2013 թ.		2012 թ.		2011 թ.		Ընդամենը
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը
1	Բացասական վերաբերմունք ձևավորող նյութեր	85	19.3	18	17	3	4	65	25.3	171
2	Դրական վերաբերմունք ձևավորող նյութեր	2	0.4	1	1	0	0	1	0.3	4
3	Նյութեր, որոնք չեզոք բնույթ ունեն	356	80.3	84	82	67	96	192	74.4	699
Ընդամենը		**443**	100	**103**	100	**70**	100	**258**	100	**871**

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 4-ից, 2014 թ. հրապարակումների մեծ մասը (մոտ 80 տոկոսը), ինչպես և նախորդ տարիներին (համապատասխանաբար մոտ 82, 96, 74 տոկոս) չեզոք բնույթ ունեն հոգեկան առողջության բնագավառի ներկայացման տեսանկյունից: Միևնույն ժամանակ 2014 թ., ինչպես և 2011-2013 թթ., բավականին մեծ թիվ են կազմում այն

[6] 2011-2013 թթ. ևս 10 հրապարակում դասակարգվել են որպես հարցազրույց և վերլուծություն:

նյութերը, որոնք բացասական ձևով են ներկայացնում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց (մոտ 19 տոկոսը՝ 2014 թ. և մոտ 17 տոկոսը՝ 2013 թ., 4 տոկոսը՝ 2012 թ., 25 տոկոսը՝ 2011 թ.): Իսկ դրական ձևով ներկայացնող հրապարակումները ընդհանուր թվով ընդամենը չորսն են (2014 թ.՝ 2, 2013 թ.՝ 1, 2011 թ.՝ 1): Ընդ որում 2014 թ. բացասական ձևով ներկայացնող նյութերից 5-ը հրապարակվել են պետական մարմինների ինտերնետային էջով:

Բացասական ձևով ներկայացնող հրապարակումները հիմնականում տեղեկատվություն են տրամադրում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից կատարված քրեորեն հետապնդելի գործողությունների մասին: Հրապարակված նյութերից մեկում նույնիսկ որակվում է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ներկայությունը հասարակությունում հանգեցնում է չարիքների՝ մարդասպանությունների և այլն: Այսինքն նման հրապարակումները խորացնում են տարածված այն կարծրատիպը, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք վտանգ են ներկայացնում հասարակության համար և ամրացնում նրանց մեկուսացումը որպես միջոց: Նյութերից մեկն էլ մի տղայի կողմից կատարված սպանության մասին է, որը կատարելու պատճառ քաղաքացին ենթադրում է հոգեկան առողջության հնարավոր խնդիրը:

2014 թ. ընթացքում հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հրապարակված նյութերի մեջ զգալի մաս են կազմում (մոտ 8 տոկոսը) Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից հոգեբուժական հաստատություններում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ հրապարակումները և դրանց կապակցությամբ Առողջապահության նախարարության արձագանքը, գործողությունները (տե՛ս աղյուսակ 5):

Աղյուսակ 5: Հրապարակումների դասակարգումը՝ ըստ հոգեկան առողջության բնագավառի խնդիրների

N	Խնդիրները	Թիվը	Տոկոսը
1	Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի գերեվարման, հայրենադարձման ու հետագա քայլերի մասին	133	30
2	Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից կատարվող հանցագործություններին, ոչ իրավաչափ կամ տարօրինակ գործողություններին	56	13
3	Հոգեկան առողջության բնագավառում խնդիրների բարձրացմանը, անհրաժեշտ բարեփոխումներին ու կոնկրետ գործողություններին	45	10
4	Մարդու իրավունքների պաշտպանի կողմից հոգեբուժական հաստատությունների խնդիրների վերաբերյալ ահազանգին և հետագա արձագանքներին ու գործողություններին	37	8.3
5	Հոգեկան առողջության բնագավառում իրականացվող ուսումնասիրություններին, հետազոտություններին	23	5.2
6	Հոգեբուժական կազմակերպությունում անձի մահին և իրականացված հետագա քայլերին	20	5
7	Օրինազանց արարք կատարելու համար հարկադիր բուժում նշանակելուն	15	3.3
8	Անձի ապօրինի հարկադիր բուժմանը և դրա կապակցությամբ քրեական գործի հարուցմանը	8	2
9	Ինքնասպանություններին կամ ինքնասպանության փորձերին	6	1
10	ՀՀ հոգեբույժների մասնագիտական պատրաստվածության ոչ բարձր մակարդակին, ոչ նրբանկատ լինելուն	1	0.2
11	Հոգեբուժական կազմակերպությունում կոռուպցիոն դրսևորումներին	2	0.4

12	Հոգեբուժական կազմակերպությունից կալանավորի փախչելու համար ոստիկանների դեմ քրեական գործ հարուցելուն	8	2
13	Հոգեբուժական կազմակերպությունում տիրող անմարդկային պայմաններին	1	0.2
14	Հոգեկան առողջության բնագավառում իրավիճակին, հիվանդությունների պատճառներին և վիճակագրական տվյալներին	7	1
15	Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի ցուցմունքի ոչ արժանահավատ լինելուն	1	0.2
16	Հոգեկան առողջության խնդիրների առաջացման պատճառներին, նախանշաններին, բուժմանը և հասարակության վերաբերմունքին	9	2
17	Հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքում ծեծկռտուքին, 4 զինծառայողների փախուստին և հետագա գործողություններին	10	2
18	Ոստիկանության աշխատակիցների կողմից հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ բռնություններին	2	0.4
19	Ոստիկանության աշխատակիցների կողմից անձի իրավունքների խախտման հերքմանը	2	0.4
20	Ոչ իրավաչափ գործողության հնարավոր պատճառ անձի հոգեկան առողջության խնդիր ունենալը տեսնելը	1	0.2
21	Հանցագործությունների, որոնք վերագրվում են հոգեկան առողջության խնդիրներին	1	0.2
22	Ոչ իրավաչափ գործողության համար հոգեբուժարան տեղափոխելուն կամ հոգեբուժական փորձաքննություն նշանակելուն	4	1
23	Պետական պատվերի շրջանակներում ձեռք բերվող անորակ դեղամիջոցներին	7	2
24	Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց դեղորայքով ապահովմանը	8	2
25	Այլ	36	8
Ընդամենը		**443**	**100**

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 5-ից, մեծ թիվ են կազմում նաև հոգեկան առողջության բնագավառում խնդիրների, անհրաժեշտ բարեփոխումների ու կոնկրետ գործողությունների վերաբերյալ հրապարակումները (մոտ 10 տոկոսը): Ընդ որում 2011-2013 թթ. համեմատությամբ նշված հրապարակումները կրկնակի աճել են, մասնավորապես 2011-2013 թթ. հրապարակվել է 21 նյութ (2011 թ.՝ 11 նյութ, 2012 թ.՝ 4, 2013 թ.՝ 6), իսկ 2014 թ.՝ 45:

2014 թ. ընթացքում հրապարակվել են նյութեր (թվով 14, նախկինում՝ 2013 թ., 6 հրապարակում է եղել), որոնք անդրադարձել են հոգեկան առողջության բնագավառում պետական քաղաքականությանը, միջազգային պարտավորությունների կատարմանը: Մասնավորապես անդրադարձ է եղել հոգեկան առողջության բնագավառում բարեփոխումների իրականացումն ապահովող ՀՀ կառավարության երկու որոշումների («Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թվականների ռազմավարությունը և ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» և «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգը հաստատելու մասին») կարևորությանը, հոգեկան առողջության բնագավառում առկա խնդիրների լուծմանն ուղղված ռազմավարության ու հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների իրականացմանը: Իսկ ռազմավարության և հայեցակարգի հիմքում ընկած են Հայաստանի Հանրապետության

կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բնագավառում:

Հարկ է նշել, որ 2014 թ. հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հրապարակումներում անդրադարձ է եղել նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար պետական պատվերի շրջանակներում ձեռք բերվող և տրամադրվող դեղամիջոցների քանակին և որակին, որոնք, նշյալ տեղեկության համաձայն, ոչ թե նպաստում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բուժմանը, այլև նույնիսկ բացասական ազդեցություն են ունենում:

Հրապարակված նյութերը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների խախտման տեսանկյունից

Հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ տարածված նյութերում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների խախտումները լուսաբանող ընդամենը 3 նյութ է հրապարակվել:

Այսպես, 2014 թ. ոչ պետական մարմինների ինտերնետային 2 էջով հրապարակել է 3 նյութ, որոնք առնչվել են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների խախտումներին: Միևնույն ժամանակ, ինչպես նշվել է վերևում, ՀՀ ոստիկանության կայքէջը հրապարակել է 2 նյութ, որոնք հերքել են ոստիկանության աշխատակիցների կողմից հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների խախտման մասին տարածված տեղեկատվությունը:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների խախտումները լուսաբանող 3 նյութերից մեկը վերաբերում է բարձր որակի առողջապահական ծառայություններ ստանալու իրավունքի խախտմանը, ևս երկուսը՝ խոշտանգումներից, դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտմանը:

Հարկ է նշել, որ 2011-2013 թթ. ևս նշված իրավունքների խախտումների վերաբերյալ հրապարակումներ են եղել: Մասնավորապես 3 նյութ է հրապարակվել բարձր որակի առողջապահական ծառայություններ ստանալու իրավունքի և 23 նյութ՝ խոշտանգումներից, դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտման վերաբերյալ: Նախորդ տարիներին հրապարակումներ են եղել, որոնք վերաբերել են նաև այլ իրավունքների խախտումներին: Այսինքն, կարող ենք եզրակացնել, որ նախորդ տարիներին զանգվածային լրատվության միջոցները առավել շատ են անդրադարձել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների խախտումներին:

Որակի չափորոշիչների պահպանման իրավունքի խախտմանը վերաբերող նյութում մասնավորապես տեղեկատվություն է տրամադրվում հոգեբուժական հաստատությունում տիրող վատ պայմանների մասին, այդ թվում՝ հավուր պատշաճի ֆինանսավորման, դեղերի, նորագույն մեթոդներով բուժման իրականացման բացակայության մասին:

Խոշտանգումներից, դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտմանը վերաբերող նյութերը վերաբերել են ոստիկանության աշխատակիցների կողմից հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ բռնություններին:

Միևնույն ժամանակ զանգվածային լրատվության միջոցները, ինչպես և նախորդ տարիներին, հրապարակում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անձնական տվյալները՝ դրանց հրապարակման թույլտվության վերաբերյալ որևէ նշում չանելով (միջազգային և ներպետական մի շարք նորմերով սահմանված է պացիենտին առնչվող տեղեկատվության գաղտնիության ապահովման իրավունքը):

Ամփոփում

2014 թ. ուսումնասիրվել է հոգեկան առողջության բնագավառին վերաբերող 443 նյութ, որից 28-ը հրապարակվել է պետական մարմինների ինտերնետային էջերով, 415-ը՝ ոչ պետական: Հաշվի առնելով, որ պետական մարմինների ինտերնետային էջերով 2011-2013 թթ. հրապարակվել է 20 նյութ, կարող ենք եզրակացնել, որ 2014 թ. ընթացքում ավելի շատ նյութ է տարածվել, քան նախորդ երեք տարիների ընթացքում: Ընդ որում նշված նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2014 թ. առավել ուշադրություն է դարձվում հոգեկան առողջության բնագավառում բարեփոխումներին, նախանշվում և իրականացվում են ծրագրեր՝ ուղղված բնագավառում առկա խնդիրների, դրանց հաղթահարման ուղիների ու կոնկրետ գործողությունների մասին: Միևնույն ժամանակ ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ շարունակվում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների խախտումները, որի պատճառ են հանդիսանում ինչպես կոնկրետ հոգեկան առողջության բնագավառում առկա խնդիրները, այնպես էլ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ ոստիկանության աշխատակիցների վերաբերմունքը, լրագրողների ոչ պատշաճ իրազեկվածությունը պացիենտին առնչվող տեղեկատվության գաղտնիության ապահովման իրավունքի վերաբերյալ:

Կարող ենք եզրակացնել նաև, որ ինտերնետային էջերի աշխատակիցները պատշաճ չեն տիրապետում հոգեկան առողջության բնագավառում զարգացումներին, միտումներին, ուստի նրանց կողմից լուսաբանումները ուղղվում են ոչ թե հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց այլոց հետ հավասար իրավունքների և հնարավորությունների լուսաբանմանը, այլ հասարակության կարծրատիպերի խորացմանը: Այսպես, 2014 թ. 443 հրապարակումներից միայն երկուսն (0.4 տոկոս) են դրական ձևով ներկայացնում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց, այն դեպքում, երբ 85-ը (19.3 տոկոս) բացասական ձևով են ներկայացում: Ընդ որում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բացասական ձևով ներկայացնող նյութերը, եթե 2011 թ. համեմատությամբ նվազել են, ապա 2012, 2013 թթ. համեմատությամբ՝ աճել: Սա իր հերթին հանգեցնում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ խարանի և կարծրատիպերի խորացմանը:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների խախտումները կանխարգելելու նպատակով անհրաժեշտ ենք համարում՝

1. իրականացնել մարդու իրավունքների, այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ դասընթացներ լրագրողների, Ոստիկանության աշխատակիցների համար,
2. նպաստել լրագրողների մասնագիտական զարգացմանը,
3. իրականացնել աշխատանքներ՝ ապահովելու հոգեկան առողջության ոլորտում միտումների, այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անկախ ապրելու ու համայնքում ներառվելու, այլոց հետ հավասար իրավունքների վերաբերյալ տեղեկատվության տարածումը:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»

հասցե՝ Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր, Տիգրան Մեծի 59, 2001
հեռ.՝ (+374 322) 4 22 68, ֆաքս՝ (+374 322) 4 12 36,
կայքէջ՝ www.hcav.am, էլ. փոստ՝ hcav@hcav.am